Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

8897
7. Щ.

СПЕЦІАЛЬНАЯ
ПЕРЕПЛЕТНЯ
ВАРДИКЯНЦА
Эривань.

18

666
5969
59986

# ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ ՍՐԲԱԶԱՆ ՏԵՂԵԱՑ

Ժողովեալ յաղօթից Վարդանայ վարդապետի սակս ջերմեռանդ հոգեւորաց որք անձամբ կամ մտօք ներկայանան 'ի տնօրինական տեղիսն Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

ՏՊԵԱԼ ՎԵՐՍՏԻՆ՝

Ի ՇՈՒՇԻ։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՀՈԳԵՒՈՐ ՏՊՐՈՑԻՆ ՀԱՅՈՑ՝

1869

Մտցո՛ւք 'ի յարկս նորա․ երկի՛րպագցուք 'ի տեղւոջ ուր կացեալ են ոտք նորա․ (Սաղմ․ գլ․ ՃԼԱ․ համ․ Է)։

# ԱՂՕԹՔ

## ԱՌԱՋԻ ՍՐԲՈՑ ԾՆՆԴԵԱՆ ՏԵՂԻՈՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Անուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ ամէն.

Խոստովանիմ և հաւատամ անբաժանելի և միանձնական և մի Աստուածդ երեքանձնեայ 'ի Հայր և Որդի և սուրբ Հոգիդ որ ես 'ի վերայ ամենայնի Աստուած օրհնեալ յաւիտեանս. ամէն:

Փառք և երկրպագութիւն ամենասուրբ Երրորդութեանդ և մի Աստուածութեանդ Հօր և Որդւոյ և Հոգւոյդ Սրբոյ. ամէն:

Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո՝ որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր. թո՛ղ մեզ զպարտիս մեր որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն. այլ փրկեա՛ 'ի չարէն. զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն:

Որդի աստուծոյ թագաւոր բարձրեալ. որ խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ. և իջեր յարգանդ ամենամաքուր սուրբ կուսին Մարիամու. և ծնար 'ի նմանէ՝ աստուածդ բոլորից մարդ կատարեալ 'ի բեթղեհէմ 'ի սուրբ յայրին, զի նորոգեսցես զհնութիւն նախաստեղծ մարդոյն, վասն որոյ երկրպա-

գելով սուրբ տեղւոյդ ծննդեան՝ փառաւորեմ զան-ճառելի խոնարհութիւնդ ընդ հրեշտակաց. օրհ-նեմ զանքննելի տնօրէնութիւնդ ընդ հովուաց. բա-րեբանեմ զանչափ մարդասիրութիւնդ ընդ մոգուցն. և աղաչեմ զքեզ փրկիչ իմ Յիսուս՝ ընկալ զեր-կրպագութիւնս իմ 'ի հաճոյս քոյ. որպէս ըն-կալար 'ի հովուացն և 'ի մոգուցն. և շնորհեա զքաւութիւն յանցանաց իմոց՝ բարեխօսութեամբ մօր քո և կուսի և ամենայն սրբոց. և արժանա-ւորեա զիս 'ի միւսանգամ գալստեանդ փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սուրբ հոգւոյդ այժմ և միշտ և յաւիտեանս ամէն։

## Աղօթք առաջի սուրբ Մսրոյն Փրկչին։

Որ էիր յառաջ քան զյաւիտեանս ընդ աստուած փառաւորեալ ընդ հօր և սուրբ հոգւոյն 'ի դա-սուց հրանիւթիցն. և հանգչէիր յաթոռս քրովբէա-կանս. և գթացեալ 'ի գործս ձեռաց քոց, խոնար-հեցար 'ի յերկնից վասն փրկութեան մերոյ. զի բարձրացուսցես զբնութիւնս մեր. իջեալ 'ի մսուր անբանից, զի զհաւասարեալս և զնմանեալս նոցին՝ յառաջին փառս վերածիցես. խանձարուրա-պատ պատեցար, զի զմեր կապանս մեղաց խզեալ

նպատառեսցես, որով և զհպարտացեալն 'ի վերայ
տեղծուածոցդ կործանեսցես. հաց անմահութեան
պարգևեցար յիսուս, զի զսովեալսն կերակրեսցես.
վասն որոյ գոհաբանեմ զտէրութիւնդ՝ որ այց ա-
րարեր պատկերիդ կորուսելոյ. և հայցեմ 'ի քէն
փրկիչ իմ, ընկալ զերկրպագութիւնս իմ բարե-
խօսութեամբ անարատ ծնողի քո սուրբ աստուա-
ծածնի և ամենայն սրբոց. և շնորհեա զայցելու-
թիւն հոգւոյ իմոյ 'ի յոր երևման փառաց քոց,
լսել զձայնդ հայրական. և փառաւորել զամենա-
սուրբ երրորդութիւնն այժմ և միշտ և յաւիտեանս.

ամէն:

— ⁂ —

## Աղօթք 'ի ժամուն յարութեան տեառն:

Ընկալ առաջի սուրբ զլան երկնատիպ տաճարի
քոյ՝ երկրպագանել անօրինական սուրբ տեղեացդ և
խնդրել զթողութիւն յանցանաց իմոց, մի՛ մեր-
ժեր զիս յողորմութենէ քումմէ, զի զին եմ սուրբ
արեանդ, զթա՛ և լուր՝ որպէս զթացար յաջակող-
մեան աւազակին, և բացեր նմա զդուռն դրախտին
կենաց, բա՛ց և ինձ մեղաւորիս զդուռն ողորմու-
թեան քո՝ բարեխօսութեամբ մօր քո և կուսի, զի
արժանի եղէց փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ
սուրբ հոգւոյդ այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն:

## Աղօթք առաջի սուրբ Բանտին Քրիստոսի։

Ո՜վ ճառագայթդ անշիջանելի՝ և լոյսդ իմանալի կենացդ իմ Յիսուս, որ ըմբռնեցար 'ի սարսափելի գիշերի մեծի ուրբաթու, և կապեցար նախատանօք՝ լուծիչդ կապից· ո՛չ դարձուցեր զանտեսանելի զերե՛սդ 'ի թքանելոյ՝ բարձողդ անիծից· գանեցար ապտակօք 'ի հրէից՝ փրկիչդ կորուսելոց· ծաղեցար 'ի զինուորաց՝ տէրդ հրեշտակաց· դատեցար 'ի պիղատոսէ արքայդ հրեղինաց· մտեր 'ի բանտ՝ սանձողդ համայնից· անարգական մահու դատապարտեցար՝ կեանքդ աշխարհի, զի զպարտաւորեալս մեզ ազատեսցես։ Վասն որոյ աղաչեմ զքեզ բարեխօսութեամբ մօր քո և ամենայն սրբոց· հա՛ն զիս 'ի բանտէ մեղաց· լո՛ւր ձայնի պաղատանաց իմոց· և յիշեա զիս յորժամ գայցես արքայութեամբ քով՝ զի դու ես տէր ամենայնի· և քեզ փառք յաւիտեանս յաւիտենից· ամէն։

— ⁂ —

## Աղօթք առաջի Քղամ պաշտեալ սուրբ Փրկչին Քրիստոսի։

Երկայնամիտ և բազումողորմ Տէր, որ կարգեցեր գլուխ ամենայն կենդանեաց զմարդն, զոր և պսակեցեր լուսեղէն փառօք։ Իսկ 'ի սատուգանել նորա

աստուածային պատուիրանացդ՝ արտաքսեցեր 'ի
փառակենցաղ դրախտէն յերկիրս մահաբեր. տա-
լով նմա մծիւ բուսուցանել զփուշ խոշոտիչ. այլ
ամենախնամ տէրդ՝ ոչ անտես արարեր զպատկերդ
տէրունական, այլ եկեր 'ի խնդիր յերկիրս անիծա-
բեր. և փոխանակ արքայական պսակին՝ 'ի սուրբ
գլուխ քո զփշեղէն պսակ ընկալար. զի զանէծսն
առաջին օրհնութիւն փոխեսցես։ Արդ՝ աղաչեմ
զքեզ Յիսուս, հան յինէն զփուշ մեղացն, և բը-
ժըշկեա զհոգի իմ 'ի խոցմանէ վիրաց, զի մի պա-
տապարտեցայց ընդ չար մշակացն. բարեխօսութբ
սուրբ աստուածածնի և ամենայն սրբոց քոց արա՛
արժանի անվախճան կենացդ, զի ընդ հրեշտակացն
զօրհնութիւն և զփառս վերառաքեցից քեզ՝ և
հօր ամենակալի և հոգւոյդ սրբոյ ճշմարտի, այժմ և
միշտ և յաւիտեանս. ամէն։

— ※ —

Աղօթք առաջի սուրբ հանդերձ բաժանման տէղւոյն
տէրունեան։

Տէրդ բոլորից, աստուածդ ամենայն արարածոց, որ
յոչընչէ ստեղծեր զերկինս և զերկիր, և զոր 'ի նո-
սա. և զարդարեցեր զամենայն գեղաշուք վայելչու-
թեամբ. և զառաջնաստեղծ մարդն զգեցուցեր հրա-
շափառ լուսով։ Նակ որդիքն անօրինաց կոծեր մեր-

կացուցին. և զհանդերձ բաժանեալ 'ի մէջի իւ-
րեանց՝ 'ի վերայ անկար պատմուճանիդ վիճակ ար-
կին: Արդ՝ աղաչեմ զքեզ փրկիչդ աշխարհի՝ մեր-
կեա՛ յինէն զքուրձ մեղաց. և զգեցո՛ հոգւոյս զլոյս
փառաց. զի մի՛ յանճառ շնորհացդ զրկեալ գտայց,
այլ դասիլ ընդ սուրբս քո 'ի կեանս անվախճան, և
քեզ փառք յամենայնի՝ այժմ և միշտ և յաւի-
տեանս. ամէն:

— ❖ —

Աղօթք առաջի պատարագման սուրբ տեղւոյն երկրպագութեան:

Զքեզ տէր աստուած իմ օրհնեմ և փառաւո-
րեմ. և զքեզ տէր գոհանամ, որ ո՛չ անտես արարեր
զգործս ձեռաց քոց. այլ միշտ հոգացար վասն մե-
րոյ փրկութեան. իջեր 'ի հօրէ և մարմնացար 'ի սր-
կուսէն. յանձն առեր զչարչարանս. բարձեր զփայտ
մահու 'ի յուս քո. եղեր 'ի գողգոթայ որպէս զիսա-
հակն առաջին՝ տարածեցեր զանարատ և զամենա-
զօր բազուկս քո՝ 'ի վերայ փրկաւէտ սուրբ խաչին՝
և պատարագեցար զանձն անարատ՝ առ 'ի հաշտու-
թիւն հօր և 'ի քաւութիւն մեղուցելոյս: Արդ՝ ըն-
կա՛լ զխոստովանութիւնս իմ հանդերձ երկրպագութ.
քեզ 'ի հաճութիւն, սրբեա՛ զիս 'ի մեղաց վասն հեղ-
ման պատուական սուրբ արեան քո և բարեխօսու-
թեամբ սուրբ աստուածածնիդ և ամենայն սրբոց

քոյ· զի դու ես տէր աստուած իմ· և 'ի քեզ անկայ յարգանդէ սուրբ աւազանին. և ո՛չ գոյ ինձ այլ աստուած բաց 'ի քէն, և քեզ փառս մատուցանեմ հանդերձ հօրդ և սուրբ հոգւովդ, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն:

---

## Աղօթք առաջի սուրբ գողգոթայի:

Թագաւոր անմահ տէր բոլորից՝ յոյս մեղաւորաց և փրկութիւն համայնից, որ յանձն առեր կամաւ զչարչարանս, և բևեռեցար 'ի խաչափայտին հեղլով զարիւն քո սուրբ 'ի փրկութիւն աշխարհի: Արդ՝ անկեալ առաջի ամենազօր տէրութեանդ՝ երկրպագանեմ սուրբ տեղւոյդ խաչելութեան, և աղաչեմ բարեխօսութեամբ մօր քո սուրբ կուսի և ամենայն սրց ներեա ինձ՝ որպէս ներեցեր չարչարողացն զքեզ· զթեա և յիս որպէս զթացար յաջակողմեան աւազակն, ընդ որում արժանացո՛ և զիս 'ի դրախտն կենաց՝ քաւելով զմեղս իմ· լո՛ւր ձայնի աղաչանաց իմոց և պահեա զիս ընդ հովանեաւ աստուածային կենսատու նշանի քո· զի արժանի եղէց գոհութեամբ փառաւորել զանոխակալ մարդասիրութիւնդ ընդ հօր և ընդ սուրբ հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն:

## Աղօթք առաջի տեղւոյն պատանապատանելոյն Քրիստոսի

Միածին բանդ հօր եւ պարգեւատու առատ ողորմութեան, որ խոնարհեցար յանձառ փառացդ. մեռար մարմնով անմահդ աստուած. զի զմահացեալս կեցուսցես. պատեցար սուրբ կտաւօք 'ի Յովսեփայ արդարոյ, զի զմերկութիւնն ադամայ ծածկեսցես. եւ զառ 'ի մեղաց կաշկանդեալս արձակեսցես. եւ այժմ աղաչեմ զքեզ բարեխօսութեամբ անարատ ծնողի քո ծածկեա զաղտեղեալ հոգի իմ անձառելի շնորհօք քո. մաքրեա 'ի մեղաց մարմնասէր զկթութեամբ քով. եւ պահեա զիս աստուածային աջովդ զի արժանի եղէց փառաւորել զքեզ ընդ հօր ամենակալի եւ ընդ սուրբ հոգւոյդ ճշմարտի այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն։

---

## Աղօթք առաջի կենսընկալ գերեզմանին Քրիստոսի։

Գոհանամ զքեն Թագաւոր անմահ, որ կամաւ յանձն առեր զչարչարանս խաչի եւ մահու, իջեր 'ի գերեզման թաղեցար 'ի սիրտ երկրի. աւերեցեր զդժոխս. լուծեր զկապանս մահու. կապեցեր զբռնաւորն. ազատեցեր զգերեալսն. զմահ խափանեցեր. զանկեալսն կանգնեցեր. յարեար 'ի մեռելոց, եւ զմեռեալսն յաւիտենից ընդ քեզ յարուցեր. վասն որոյ անկա-

նեմ առաջի քո՝ երկրպագելով աստուածընկալ սբյ գերեզմանիդ· հաւատամ ի ճշմարիտ մարդեղութիդ· օրհնեմ զխաչելութիւնդ· գովեմ զխոնարհութիւնդ· բարեբանեմ զփառաւոր թաղումդ· և փառաւորեմ զկենսատու յարութիւնդ: Արդ՝ բարեխօսութեամբ անարատ ծնողի քո սուրբ աստուածածնի և ամենայն սրբոց լուր ձայնի պաղատանացս իմոց և արժանաւորեա զիս ճշմարիտ խոստովանութեամբ և փրկական սուրբ մարմնոյ և արեան հաղորդութեան դառնալ առ քեզ: Յիշեա տէր զամենայն հաւատացեալսն՝ և զայնոսիկ՝ որք յանձնեցին մեզ յիշել 'ի սուրբ տեղւս այս, և ողորմեա նոցա ըստ մեծի ողորմութեան քում, և արժանի արա զամենեսեան գալ յերկրպագութիւն ամենասուրբ գերեզմանի քո և վայելել զշնորհս սուրբ տեղեաց, ընդ նոսին շնորհեա և ինձ աստուած իմ յիսուս ջերմ արտասուս և սէր հոգևոր. զի արժանապէս փառս և երկրպագութիւն մատուցից քեզ ընդ հօր և ընդ սուրբ հոգւոյդ այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն:

— ❦ —

Աղօթք 'ի սուրբ պատրիարքին, ուր երևեցաւ Տէրն
Մարիամու Մագդաղենացւոյն:

Մեծ ես դու տէր և սքանչելի են գործք քո, որ արարեր զանքննելիսն. յարեար աստուածահրաշ զօ-

բութեամբք ոչ խախտելով զհիմք զերեզմանիդ. երե-
ւեցար կանանցն իւղաբերից, զսուգ նոցա փարա-
տեցեր. զտրտմեալսն մխիթարեցեր. 'ի պարտիզին
կանգնեցեր զառ 'ի դրախտի զկործանեալն. յայտ-
նելով մարիամու մագդաղենացւոյն՝ զարտասուս նո-
րա սրբեցեր. առաքեցեր զնա առ ընտրեալս քո 'ի
Գալիլեայ՝ և նոքօք աւետարանեցեր զյարութիւնդ։
Արդ՝ խնդրեմ 'ի քէն մարդասէր տէր, բարեխօ-
սութեամբ ծնողին քո և երջանիկ սրբոց առաքե-
լոցդ՝ երևեցո՛ ինձ զերեսս քո, հաստատեա՛ զիս 'ի
քեզ. յարո՛ զիս 'ի մեռելութենէ մեղաց, և պար-
գևեա ինձ զուրախութիւնդ անսպառ, զի արժա-
նաւորեցայց լինել փառաւորիչ ամենասուրբ անո-
ւանդ քո, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։

## Աղօթք առաջի սեղան, յորում կատարեցաւ պատարագն, որ է 'ի սուրբ Յովհաննու եկեղեցւոջ։

Ողորմագութ մարդասէր տէր, որ վասն իմոյ փըր-
կութեան յօժարակամ կրեցեր զանտանելի չարչա-
րանս, կապեցար 'ի սեան կապողդ երկնից, զի ար-
ձակեսցես զիս 'ի չար կապանաց բանսարկուին. ան-
խնայ հարուածոց՝ զանից և ապտակաց հանդուր-
ժեցեր՝ փրկիչդ տիեզերաց, զի զվիրաւորեալս 'ի հո-
գի և 'ի մարմին՝ ապաքինեսցես. և արդ՝ խնդրեմ 'ի

քէն թագաւոր անմահ. կալեալ զիս 'ի յաւիտենական սէր քո. զի միայն զքեզ սիրեցից և քեզ ծառայեցից, և զամենասուրբ անուն քո փառաւորեցից հանապազ. և արժանացո զիս բարեխօսութեամբ անարատ ծնողին և սիրելի աշակերտին քո Յովհաննու՝ երանաւէտ տեսլեանդ. և քեզ փառք ընդ հօր ամենակալի և ընդ սուրբ հոգւոյն ճշմարտի, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն:

— ⁂ —

Աղօթք առաջի աղօթատեղւոյն տէրունական 'ի յայրն Գեթսեմանի:

Հօրն երկնաւորի միածին որդի յիսուս քրիստոս, որ զկնի աւանդելոյ զխորհուրդ կենարար մարմնոյ և արեան քո 'ի սուրբ վերնատունն՝ եկիր 'ի պարտէզն գեթսեմանի՝ 'ի խնդիր յեդեմական դրախտի կորուսելոյն. աղօթեցեր մարմնով առ հայր վասն իմոյ փրկութեան. յանձն առեր զօրանալ 'ի հրեշտակաց՝ զօրացուցիչդ երկնաւորաց և երկրաւորաց, կամաւ մատնեցար հրէից՝ նենգութեամբ անօրէն աշակերտին յուդայի՝ զի զմատնեալս մահու և դժոխոց ազատեսցես: Տէր՝ աղաչեմ զքեզ անոխակալ փրկիչ՝ փրկեա զիս 'ի մեղաց և յամենայն փորձութեանց, և արժանացո ընդ սուրբս քո ժառանգել զերկնից արքայութիւնդ. զի դու ես տէր կենաց և աստուած

ողորմութեանց՝ և քեզ փառք և երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

— ⁂ —

Աղօթք առաջի սուրբ համբարձման տօնին տէրունական։

Տէր իմ յիսուս քրիստոս. որ կատարեցեր զամենայն մարմնաւորին տնօրէնութիւնս քո. և զկնի փառաւոր յարութեանդ յաւուրս քառասուն երևելով աշակերտացդ՝ ուսուցեր նոցա զարքայութեանն քոյ անճառ գիտութիւնն զոր և հանեալ 'ի լեառն ձիթենեաց՝ լցեր զանազան շնորհօք. եւ տուեր նոցա առաքելական իշխանութիւն՝ քարոզել զաւետարանն ամենայն արարածոց. օրհնելով զնոսա առաքեցեր աշակերտել զամենայն հեթանոսս, և մկրտել յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, և պատուիրեցեր նոցա սպասել յԵրուսաղէմ, մինչև զգենուլ զզօրութիւնն 'ի բարձանց: Եւ ապա ինքնիշխան աստուածային զօրութեամբդ համբարձար աստի յերկինս առ Հայր: Արդ՝ և այժմ ցնծեալ առաջի ոտնատեղւոյդ՝ խնդրեմ 'ի քէն բարձրեալ Թագաւոր՝ աստուած իմ յիսուս՝ արժանացո զիս 'ի միւսանգամ փառաւոր գալստեանդ՝ դասակից լինել աջակողմեան դասուն, և ընդ սուրբս քո վերանալ յերկինս, և երգել զերգս օրհնութեան ընդ բանակացն (Յայտ. Գլ. Է. 12). օրհնութիւն և

փառք. և իմաստութիւն, և գոհութիւն, և պատիւ, զօրութիւն, և շնորհք տեառն Աստուծոյ մերոյ յաւիտեանս. ամէն:

Աղօթք առաջի ամենօրհնեալ տիրամօր սուրբ Աստուածածնին գերեզմանին:

Ով մայր ողորմութեան և ծնող Աստուծոյ բանին անարատ կոյս սուրբ աստուածածնին. դիմեցիս 'ի մեղաւոր ծառայս քո, զի առ քեզ ապաւինիմ, որ յոյս ես մեղաւորաց, ապաւէն կորուսելոց, կանգնիչ գլորելոց, և բարեխօս վասն ազգի մարդկան: Արդ՝ անկանիմ առաջի քո համբուրելով զորովբէկապահ զամբարանն աստուածաբնակ մարմնոյդ. և աղաչեմ զքեզ՝ ազատեա զիս յորոգայթէ մեղաց. և կանգնեա զկործանեալս 'ի խորս չարեաց. և մի մերժեր զիս 'ի քոյ բազմախնամ գթութենէդ. զի գին եմ սուրբ արեան միածնի քոյ և Աստուծոյ իմոյ, որում երկրպագութիւն փառք և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն:

Աղօթք առ Հայրն Աստուած:

Փառք քեզ Աստուած Հայր ամենակալ՝ հզօր և ահի կարօղ, որ միայն ես և ամենայն օրինաց երկ-

նաւորաց և երկրաւորաց. և առատապէս լնու ըզ-պէտս ամենեցուն: Տո՛ւր մեզ տէր աղաչեմք զքեզ յաղթել չարին. և մի՛ տար զմեզ 'ի փորձութի, այլ փըր-կեա՛ յաներևոյթ գաղանէն վն անուանդ քում սրբոյ:

## Աղօթք 'ի ժամս որդւոյ:

Օրհնութի քեզ որդի այ տէր մեր յս քս՝ որ յայց եկիր մեզ, և եկիր 'ի փրկել զարարածս քո. գթած և մարդասէր անէր՝ զքո ո՛ր անօրէնութիւն առ քեզ բա-րեխօս ունիմք, զոր կամաւորութբ յանձն առեր: Զծնունդն, զմկրտութին, զխաչելութին, զթաղումն, զյարութին, և զմեծապէս համբարձումն. մի՛ անտես առներ զմեզ, զոր գնեցեր պատուական արեամբդ քով սրբով:

## Աղօթք 'ի ժամս սուրբ հոգւոյն:

Գոհութի մատուցանեմք քեզ ս՟բ հոգի ած ճշմարիտ արեգակն արդարութե, որ ծնար զմեզ վերստին յար-գանդէ ս՟բ աւազանին՝ յորդեգրութի հօրն երկնաւորի: Ծագեա՛ 'ի սիրտ մեր և լուսաւորեա՛ ջնջեա՛ ըզ-հոգիս մեր 'ի սէր սրբութե վառեսցի 'ի փրկութի ան-ձանց մերոց, 'ի պահել և յերկրպագութի ս՟բ երրոր-դութեանդ և մի աստուածութեանդ. այժմ և միշտ և յաւիտեանս:

8897



Աղօթք առ տէր աստուած։

Ած ած իմ՝ որ քննես զսիրտս և զերիկամունս. հայեաց յերկնից 'ի սրբութենէ քումմէ, և տես զտարակուսեալ անձն եղկելւոյս. 'ի յանցանաց ազատեա զպարտաւորս, և 'ի մեղաց մաքրեա զբազմամեղս։ Մի՛ ընկեններ զիս յերեսաց քոց տէր, և մի՛ ընդվայր հարկաներ զիս վն մեղաց իմոց։ Աղաչեմ զքեզ տէր՝ զօր վախճանին իմոյ 'ի պատշաճի արա, և ըզհրեշտակ խաղաղութեան առաքեա առ ծառայս քո։

Զհոգեվարքն իմ թեթև արա, և զհոգիս իմ խաղաղութեամբ անցո ընդ չարութիւն այսոցն՝ որք են 'ի ներքոյ երկնից. խաւարեսցին աչք նոցա զի մի՛ տեսցեն, և զչարութիւն նոցա կործանեա. սաստիկ սաստեա քո տէր սպառեսցին, սպառնալիք նոցա ըմբռնեսցին։

Զարհուրանք նոցա զանալիցք եղիցին. գնացք նոցա ըմբռնեսցին. բանութիւնք նոցա խափանեսցին. չար խորհուրդք նոցա տոչորեսցին. տարափք նոցա ջարդեսցին. ջոլիրք նոցա կոփահարեսցին. կռիւք նոցա ջնջեսցին ջանք նոցա և բանակք բեկցին։

Զօրքն զարհուրեսցին. շշնջմունքն շիջցին. պատերազմունքն պարտեսցին. յարձակմունքն արձանասցին. զէնքն գզուեսցին. աղաղակքն ազարտեսցին. մեքենայքն մանրեսցին. սպառազէնքն սպառեսցին. ցասմունքն ցածասցին. մեկնազէնքն մորմոքեսցին.

Ամբարտաւանութիւնքն ամաչեսցին. քաջքն քամահեսցին. կրօնքն լքեսցին, և միանգամայն ամ միաբանութիւնք նոցա 'ի սկզբանէ քակտեսցին. զի փառաւորեսցի զամենայնօր տէրութիւն այժմ"։

## Աղօթք առ սուրբ խաչն տէրունական։

Տէր յս քս՝ նշանի խաչի քոյ երկրպագանեմ, և աղաչեմ վասն զօրութեան քոյ՝ զոր գործեցեր 'ի սմա. զհոգի և զմարմին իմ 'ի մեղաց և յամ չարեաց պահեա. 'ի խոտորմանց և 'ի նենգութեանց թշնամւոյն փրկեա, և արժանաւորեա յաւիտենական ուրախութեանցն արժանապէս։ Փրկիչ աշխարհի մի՛ թողուր զիս. զի դու իսկ արժանաւորեցեր ելեալ քոյ 'ի խաչ վասն իմ. հովանասցես և փրկեսցես յաւուր նեղութեան։ Ով խաչ քսի՝ որ քեւ փրկեալ եմ, քեւ լիցի թողութիւն և քաւութիւն մեղաց իմոց։ Ով խաչ՝ ապրեցո՛ զիս վասն նորա որ կախեցաւ զքեն։ Ով խաչ՝ պահեա՛ զիս վն նորա որ զգեցաւ մարմին և չարչարեցաւ 'ի քեզ։ Փրկիչ տէր՝ փրկեա զիս վն զօրութեան խաչի քոյ. և յամ չարեաց պարապեա։ Խաչ քո տէր յս՝ զոր ես երկրպագանեմ, եղիցի ինձ 'ի փրկութիւն, կեանք, զէն յաղթութեան, և օգնականութիւն այժմ և 'ի հանդերձեալն, և քեզ փառք յաւիտեանս։

## Աղօթք առ սուրբ Աստուածածինն։

Ո՛վ ամենասրբուհի ածածին, պարծանք կուսութեան, ճրագ պայծառագոյն քան զարեգակն, Ո՛վ ջահ

փայլուն քան զլուսին և զաստեղս։ Ո՛վ աթոռ քրով-բէական բարձրագոյն քան զերկինս. Ո՛վ սերովբէ հողեղէն վեհագոյն քան զհրեշտակս և պատուակա-նագոյն քան զանմարմին դասս երկնաւորաց։ Ո՛վ պարծանք կուսանաց և փառք ամուսնացելոց։

Դու ես հարսն անսկզբնականին. դու ես մայր մարմ-նացելոյ միածնի որդւոյն ա̄ծյ. դու ես բնակարան հո-գւոյն սրբոյ։

Քև հաշտեցաւ ա̄ծ ընդ մարդկային բնութիւն՝ որ մե-ղաւ. քև բացաւ փակեալ դուռն դրախտին։

Քև օրհնեցաւ երկիր յանիծից նախահօրն. քև տնկեցաւ քաղցրութի̄ և ճշմարտութի̄ յերկրի։

Քև ծանեաք զա̄ծ. քև անուանեցաք քրիստոնեայ. քև ընկալաք զապաշխարութի̄ 'ի թողութի̄ մեղաց։

Քեզ միայն տուաւ համարձակութիւն բարեխօսել վասն ազգի մարդկան։

Ո՛վ որովայն ա̄ծակրող մայր ա̄ծածնող։ Ա̄՛ծաշօ-շափ ձեռն. ա̄ծահանգիստ գիրկք. ա̄ծատեաց ստինք. ա̄ծաբարձ բազուկք. ա̄ծամերձ բերան. ա̄ծահամբոյր շրթունք. ա̄ծահայեաց աչք. ա̄ծախօս լեզու. ա̄ծըն-կալ խորան. ա̄ծաբնակ տաճար։

Մի՛ մոռանար զխոստովանողս քո, որք քև փառա-ւորեն զհայր և զորդի և զսուրբ հոգին՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

կանոն է. Մկրտութիւն, Հաղորդութիւն, Խոստո-վանութիւն, Ապաշխարութիւն, Դրոշմ, Օծումն, և Ձեռնադրութիւնն:

Փառք օրհնութիւն և գոհութիւն 'ի բարձունս հօր և որդւոյ և սբ հոգւոյն, այժմ և միշտ:

Սուրբ աստուած հայր գթութեանց, որ ստեղծեր զիս յոչընչէ. սրբեա զհոգիս,

Սուրբ ած որդի միածին, որ փրկեցեր զիս խաչե-լութեամբդ. լուսաւորեա զմիտս:

Սուրբ ած հոգի ճշմարիտ, որ նորոգեցեր զիս մ-կրտութեամբ. մաքրեա զկամս իմ:

Սուրբ սուրբ սուրբ տէր զօրութեանց ունկն դի՛ր ա-ղօթից իմոց, լուր ձայնի իմում, ընկալ զաղաչանս իմ և զհառաչանս սրտի իմոյ. ներեա քաւեա զիս զմեղաւորս և տուր ինձ շնորհս հաճոյարարս, բարեխօսութբ սրբոյ ածածնին և աղաչանօք սրբոյն զգրիգորի լուսաւորչին. և որոց այսօր է յիշատակ:

Պաղատիմ առ քեզ սրբուհի կոյս ածածին մա-րիամ, ուրախացեալ և բերկրեալ, երանեալ և փա-ռաւորեալ տէր ընդ քեզ օրհնեալ ես դու 'ի կա-նանս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո յս քս. մայր ամենօրհնեալ բարեխօս լեր առ միածին որդին քո վասն իմ մեղաւորիս, փրկել զիս 'ի փորձութենէ և ամենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ և տալ ինձ

կանոն է. Մկրտութիւն, Հաղորդութիւն, Խոստա-վանութիւն, Ապաշխարութիւն, Դրոշմն, Օծումն, և Ձեռնադրութիւնն:

Փառք օրհնութիւն և գոհութիւն ՚ի բարձունս Հօր և Որդւոյ և Սբ Հոգւոյն, այժմ և միշտ:

Սուրբ աստուած հայր գթութեանց, որ ստեղծեր զիս յոչընչէ. սրբեա զհոգիս,

Սուրբ ած որդիդ միածին, որ փրկեցեր զիս խաչե-լութեամբդ. լուսաւորեա զմիտս:

Սուրբ ած Հոգիդ ճշմարիտ, որ նորոգեցեր զիս մը-կրտութեամբ. մաքրեա զկամս իմ:

Սուրբ սուրբ սուրբ տէր զօրութեանց ունկն դիր ա-ղօթից իմոց, լուր ձայնի իմում, ընկալ զաղաչանս իմ և զհառաչանս սրտի իմոյ. Ներեա քաւեա զիս զմեղաւորս և տուր ինձ շնորհս հաճոյարարս, բարեխօսուք սրբոյ ածածնին և աղաչանօք սրբոյն գրիգորի լուսաւորչին. և որոց այսօր է յիշատակ:

Պաղատիմ առ քեզ սրբուհի կոյս ածածինդ մա-րիամ, ուրախացեալ և բերկրեալ, երանեալ և փա-ռաւորեալ տէր ընդ քեզ օրհնեալ ես դու ՚ի կա-նանս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո յս քս. մայր ամենօրհնեալ բարեխօս լեր առ միածին որդին քո վասն իմ մեղաւորիս, փրկել զիս ՚ի փորձութենէ և ամենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ և տուր ինձ

զշնորհս զօրաւորս ըստ կամաց իմոց անցուցանել զանցաւոր կենցաղոյս իմ, և 'ի ժամ մահուն իմոյ և հասանել խաղաղութբ առ. քեզ անձկալիդ երանել և փառաւորել զքեզ ընդ որդւոյդ յաւիտեանս․ ամէն։

Իմաստուն կանայք շինեցին տունս․ իսկ անզգամքն ձեռօք իւրեանց կործանեցին։

Որդի իմաստուն ուրախ առնէ զհայր․ որդի անմիտ տրտմութիւն է մօր։

Որդի խորագէտ հնազանդի հօր․ որ անհնազանդ կորուստ եղեցի։

Լուր որդեակ խրատոյ հօր քոյ, և մի՛ մերժեր զօրէնս մօր քո․ զի պսակ շնորհաց կալցիս 'ի գլուխ քո և մանեակ ոսկի 'ի պարանոցի քում։

Լաւ է պատառ մի հեշտութ և խաղաղութբ, քան զտունս լի բազում բարեօք հանդերձ թշուառութբ։

Լաւ է բնակել անապատի, քան ընդ կնոջ անզգամի լեզուանւոյ և բարկացողի։

Լաւ է անուն բարի, քան զմեծութիւն բազում, և քան զարծաթ և զոսկի շնորհք բարի։

Լաւ է աղքատ որ գնայ ճշմարտութեամբ քան զմեծատուն սուտ։

Լաւ է երթալ ի տուն սգոյ, քան 'ի տուն արբեցուե

Լաւ է փոքր բաժին երկիւղի տեառն, քան զմեծամեծս աներկիւղածութեամբ։

Լաւ է սակաւիկ ինչ առնուլ արդարութեամբ, քան զբազում արթիւնս աներկիւղածութեամբ։

Լաւ է յանդիմանութիւնն յայտնեալ, քան բարեկամութիւնն ծածկեալ։

Ի մերձենալ ինձ օր հասին։
անկայ տկար խիստ ցաւակին,
վերջին վախճան նշէ մէկին,
ո հ լցէ փրկել 'ի տանջանաց դժոխոց։

— ❖ —

1869 ամի 'ի 1-ն փետրվարի ես Պափանցի Շուշի բնակիչ մահտեսի Գալուստ տէր Գէորգեանս այս աղօթատետրակս հինգ հարիւր հատոր տպել տուի որ բաժանեմ ձրիաբար մեր քրիստոնեայ ազգի մէջ․ ով ոք որ այս աղօթքներս կարդա իւր հոգւոյ փրկութեան համար․ անդ յիշեսցէ մեզ և մեր ծնողացն։

ԱՄԷՆ։